

Հաստատված է
ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՔՐԵԱԲԱՆՈՒԹՅԱՆ
 ամբիոնի 31.08.2020թ. նիստում (արձ. թիվ 1)
 Ամբիոնի պետի ժ/պ _____ Հ.Խաչատրյան
 31.08.2020թ.

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
 ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ**

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ	Կրիմինալոգիա 1
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Հեռակա ուսուցման
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Իրավագիտություն
ԱՍԲԻՈՆ	Քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոն E-mail: qreakan@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ	Հ.Խաչատրյան, E-mail: vahagnano@rambler.ru
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՍՅԱԿ	3-րդ կուրս, 5-րդ կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ	բակալավր

ԿՐԵԴԻՏՆԵՐ	-
ԴԱՍԱԺԱՍԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ	«Կրիմինալոգիա 1» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 40 ժամ, որից 14 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար պարապմունք, 22 ժամ ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Կիսամյակի ընթացքում սովորողները հանձնում են միջանկյալ քննություն:
ՍՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ	Դասընթացը կառուցվում է «ՀՀ քրեական իրավունք» դասընթացի իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ	Դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են կրիմինալոգիայի հասկացությունը, առարկան, մեթոդաբանությունը, կրիմինալոգիայի հիմնական տեսությունները, հանցավորության վերաբերյալ ուսմունքը, հանցագործությունների կանխարգելման և վիկտիմոլոգիական պրոֆիլակտիկայի, բռնի, շահադիտական հանցավորության, ընտանեկան բռնությունների կանխարգելման հիմնահարցերը:

<p>ՆՊԱՏԱԿ</p> <p>ԽՆԴԻՐՆԵՐ</p>	<p>Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ հանցավորության կրիմինալոգիական բնութագրի, պատճառների ու պայմանների, հանցավորության կանխարգելմանն ուղղված միջոցառումների, օբյեկտների և սուբյեկտների, վիկտիմոլոգիայի և վիկտիմոլոգիական պրոֆիլակտիկայի, ընտանեկան բռնությունների, բռնի և շահադիտական հանցավորության առանձնահատկությունների զարգացման միտումների և կանխարգելմանն ուղղությունների վերաբերյալ:</p> <p>Դասընթացի խնդիրներն են՝</p> <ul style="list-style-type: none"> • ներկայացնել հանցավորության հասկացությունը և կրիմինալոգիական բնութագիրը, • ուսումնասիրել հանցանք կատարած անձանց բնութագրի առանձնահատկությունները • ուսումնասիրել և վերլուծել հանցավորության ծնող պատճառներն ու պայմանները, • ուսումնասիրել հանցավորության կանխարգելման հասկացությունը, տեսակները, օբյեկտները և սուբյեկտները, • ուսումնասիրել վիկտիմոլոգիան, վիկտիմությունը, վիկտիմ վարքագծին նպաստող հանգամանքները և վիկտիմոլոգիական կանխարգելման հնարավորությունները, • ուսումնասիրել բռնի հանցավորությունը և դրա կանխարգելումը • ուսումնասիրել ընտանեկան բռնությունները և դրանց կանխարգելումը • ուսումնասիրել շահադիտական հանցավորությունը և դրա կանխարգելումը
<p>ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</p> <p><i>Կարողանա՝</i></p>	<ol style="list-style-type: none"> 1. սահմանել հանցավորության հասկացությունը, 2. վիճակագրական տվյալների հիման վրա ինքնուրույն վերլուծել հանցավորության վիճակը, մակարդակը, շարժը, կառուցվածքը, 3. Կանխատեսել հանցավորության ապագա վիճակը, 4. կազմել հանցանք կատարած անձի կրիմինալոգիական պատկերը, 5. դասակարգել հանցանք կատարած անձանց ըստ տարբեր չափանիշների, 6. վերլուծել հանցավորության ծնող պատճառներն ու պայմանները, հանցավոր վարքագծին նպաստող այլ գործոնները, 7. վերհանել կոնկրետ հանցավոր վարքագծի վրա բացասաբար ազդող գործոնները, 8. սահմանել հանցավորության կանխարգելման հասկացությունը, տարբերակել կանխարգելման տեսակները, դասակարգել կանխարգելման սուբյեկտներին ըստ տարբեր չափանիշների, 9. սահմանել վիկտիմության հասկացությունը, դասակարգել վիկտիմ վարքագիծը, 10. սահմանել վիկտիմոլոգիական պրոֆիլակտիկայի հասկացությունը, նրա տեսակները: 11. ներկայացնել բռնի հանցավորության կրիմինալոգիական բնութագիրը և կանխարգելման միջոցները 12. ներկայացնել ընտանեկան բռնությունների կրիմինալոգիական

	<p>բնութագիրը և կանխարգելման միջոցները</p> <p>13. ներկայացնել շահադիտական հանցավորության կրիմինոլոգիական բնութագիրը և կանխարգելման միջոցները</p>
--	--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	
Հիմնական	<ol style="list-style-type: none"> 1. Ամբիոնի կողմից մշակված դասախոսություններ 2. Кудрявцев В.Н., Эминов В.Е. Криминология.- Москва,Юристь, 2007. 3. Малков В.Д. Криминология.- Москва,Юстицинформ, 2008 4. Долгова А.И. Криминология, 3-е издание- Москва,Норма, 2008 5. Антоян Ю.М. Криминология, избранные лекции, Москва, Логос 2004 6. Жмуров Д.В. Криминология в схемах и таблицах (общая часть), Иркутск, 2012 7. Карпец И. И. Преступность: иллюзии и реальность. — М.: Российское право, 1992
Լրացուցիչ	<ol style="list-style-type: none"> 1. Кузнецов Н.Ф.,Лунеев В.В. Криминология,учебник , 2-е издание, Москва 2005 2. Давыдов Я.В. Криминология: Конспект лекций. — М.: Приор-издат, 2006 3. Актуальные проблемы теории и практики борьбы с организованной преступностью в РФ. Мат. науч.практ. конф. М., 1994. 4. Гуров А.Л. Профессиональная преступность: прошлое и современность. М., 1990. 5. Шнайдер Г.И. Криминология/Пер. с нем. М., 1994.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ	Ստուգարք (ստուգված, չստուգված)
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵՆԱՆԻՉՄՆԵՐ	<p>Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (ստուգված) առաջադիմություն:</p> <p>Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»:</p> <p>Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝</p> <p>ա) «Գերազանց», եթե սովորողը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, զրազետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևավոյվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու</p>

	<p>կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով.</p> <p>բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների.</p> <p>գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները.</p> <p>դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:</p>
<p>ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p>	
<p>Ներկայություն</p> <p>Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ</p> <p>Ինքնուրույն և գործնական աշխատանքներ</p>	<p>Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին:</p> <p>Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:</p> <p>Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:</p> <p>Ինքնուրույն աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:</p>

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՂՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Թեմա 1 Կրիմինալոգիայի հասկացությունը, առարկան, մեթոդները, տեղը գիտությունների համակարգում, որպես գիտության զարգացման պատմությունը (2 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցերը	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1. Կրիմինալոգիայի հասկացությունը և առարկան 2. Կրիմինալոգիայի մեթոդները 3. Կրիմինալոգիայի տեղը մյուս գիտությունների համակարգում 4. Կրիմինալոգիայի, որպես գիտության, զարգացման պատմությունը	Հարցեր 1-2-3-4 – ներկայացվում է դասախոսություն: Հարցեր 1-2-3 -4- ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար:

Թեմա 2 Հանցավորություն (2 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1. Հանցավորության հասկացությունը, սոցիալական էությունը 2. Հանցավորության քանակական և որակական բնութագիրը 3. Հանցավորության լատենտայնության էությունը, դրա հետևանքները և պատճառները 4. Հանցանք կատարած անձի հասկացությունը և կառուցվածքը	Հարցեր 1-4 – ներկայացվում է դասախոսություն: Հարցեր 1-4 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը, քրեական վիճակագրությանը, իրականացնում են վերլուծական աշխատանքներ՝ հանցավորության վիճակի, մակարդակի, շարժի, ինչպես նաև հանցանք կատարած անձանց վերաբերյալ վիճակագրության ուսումնասիրություն

Թեմա 3 Հանցավորության դետերմինացիա (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1. Հանցավորության դետերմինացիայի հասկացությունը 2. Հանցավորության պատճառների և պայմանների դասակարգումը 3. Հանցավոր վարքագծի մեխանիզմը	Հարցեր 1-3 – ներկայացվում է դասախոսություն: Հարցեր 1-3 – սեմինար պարապմունք: Սովորողները քննարկում են հանցավորության պատճառներն ու պայմանները, վերլուծում հանցավոր վարքագծի մեխանիզմը : Հարցեր 1-3– ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը:

Թեմա 4 Հանցավորության կանխարգելում	
-----------------------------------------------------	--

(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար պարապմունք)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<ol style="list-style-type: none"> 1. Հանցավորության կանխարգելման հասկացությունը 2. Հանցավորության կանխարգելման տեսակները 3. Հանցավորության կանխարգելման օբյեկտները 4. Հանցավորության կանխարգելման սուբյեկտները 5. Վիկտիմոլոգիական կանխարգելումը 	<p>Հարցեր 1-5 – ներկայացվում է դասախոսություն:</p> <p>Հարցեր 1-5 – սեմինար պարապմունք: Սովորողները քննարկում են կանխարգելման առավել արդյունավետ միջոցներն ու հնարավորությունները:</p> <p>Հարցեր 1-5– ինքուրույն աշխատանք, սովորողները ծանոթանում են գրականությանը՝ դուրս գրելով խնդրահարույց հարցերը:</p>

Թեմա 5 Բռնի հանցավորությունը և դրա կանխարգելումը (2 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<ol style="list-style-type: none"> 1. Բռնի հանցավորության կրիմինալոգիական բնութագիրը 2. Բռնի հանցագործների անձի կրիմինալոգիական բնութագիրը 3. Բռնի հանցավորության պատճառներն ու պայմանները 4. Բռնի հանցավորության կանխարգելումը 	<p>Հարցեր 1-4– ներկայացվում է դասախոսություն:</p> <p>Հարցեր 1-4 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը, քրեական վիճակագրությանը, տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ և պատկերացում ձեռք բերելու համար:</p>

Թեմա 6 Ընտանեկան բռնության կրիմինալոգիական բնութագիրն ու կանխարգելումը (2 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<ol style="list-style-type: none"> 1. Ընտանեկան բռնության կրիմինալոգիական բնութագիրը 2. Ընտանեկան բռնության պատճառներն ու պայմանները 3. Ընտանեկան բռնության կանխարգելումը 	<p>Հարցեր 1-3 – ներկայացվում է դասախոսություն:</p> <p>Հարցեր 1-3 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը, քրեական վիճակագրությանը, տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ և պատկերացում ձեռք բերելու համար:</p>

Թեմա 7 Շահադիտական հանցավորությունը և դրա կանխարգելումը (2 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն

1. Շահադիտական հանցավորության կրիմինալոգիական բնութագիրը	Հարցեր 1-4 – ներկայացվում է դասախոսություն:
2. Շահադիտական հանցագործների անձի կրիմինալոգիական բնութագիրը	Հարցեր 1-4 – ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը, քրեական վիճակագրությանը, տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ և պատկերացում ձեռք բերելու համար:
3. Շահադիտական հանցավորության պատճառներն ու պայմանները	
4. Շահադիտական հանցավորության կանխարգելումը	

Հարցաշար

«Կրիմինալոգիա 1» առարկայի միջանկյալ քննության

1. Կրիմինալոգիայի հասկացությունը և առարկան
2. Կրիմինալոգիայի մեթոդները
3. Կրիմինալոգիայի տեղը մյուս գիտությունների համակարգում
4. Կրիմինալոգիայի որպես գիտության ծագումը և զարգացման նախական փուլը
5. Կրիմինալոգիայի զարգացման դասական ուղղությունը
6. Կրիմինալոգիայի զարգացման մարդաբանական (կենսաբանական) ուղղությունը
7. Կրիմինալոգիայի զարգացման սոցիոլոգիական ուղղությունը
8. Սոցիալական կազմալուծման տեսության
9. Անոմիայի տեսությունը
10. Մշակույթների հակադրության տեսություն
11. Ստիգմայի տեսություն
12. Հանցավորության հասկացությունը, սոցիալական էությունը
13. Հանցավորության քանակական բնութագիրը
14. Հանցավորության որակական բնութագիրը
15. Հանցավորության լատենտայնություն
16. Հանցագործի անձի հասկացությունը
17. Հանցագործի անձի կառուցվածքը
18. Հանցագործի անձի տիպաբանությունը
19. Հանցավորության պատճառների հասկացությունը / դետերմինացիա/
20. Հանցավորությանը նպաստող պայմանները
21. Հանցավոր վարքագծի հասկացությունը
22. Հանցավոր վարքագծի մեխանիզմ
23. Հանցավորության կանխարգելման հասկացությունը
24. Հանցավորության կանխարգելման տեսակները
25. Հանցավորության կանխարգելման օբյեկտները
26. Հանցավորության կանխարգելման սուբյեկտները
27. Վիկտիմոլոգիա
28. Հանցագործությունների վիկտիմոլոգիական կանխարգելում